Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն Ազգանուն, զբաղեցրած պաշտոն**

Մարինե Մկրտչյան, Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյան հավաքածու) ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2026թ. ապրիլի 13-16-ը, Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա:

3. **Հրավիրող կողմը**

«Հրեաների թանգարան և եղբայրական կենտրոն»:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Գործուղման նպատակը՝ մասնակցել «Տրանսֆորմացիայի տարածություն. թանգարանները՝ հոգեկան և հուզական բարեկեցության համար» միջազգային ֆորումին որպես բանախոս՝ ներկայացնելու Ռուսական արվեստի թանգարանի կրթական ծրագրերը, որոնք ուղղված են տարեց անձանց ներգրավմանը, ինչպես նաև ծանոթանալու միջազգային փորձին և զարգացնելու մասնագիտական համագործակցությունները՝ թանգարանի կրթական և սոցիալական ծրագրերի կատարելագործման նպատակով:

5. **Քննարկված թեմաները՝**

- Թանգարանների դերը հոգեկան և հուզական բարեկեցության ապահովման գործում,
- Թանգարանային ծրագրերի ազդեցությունը տարբեր սոցիալական խմբերի, հատկապես տարեցների վրա,
- Կրթական և ներառական ծրագրերի մշակման և իրականացման արդյունավետ մեթոդներ,
- Միջազգային փորձի փոխանակում թանգարանների սոցիալական և համայնքային գործունեության ոլորտում,
- Թանգարանների համագործակցությունն առողջապահական և սոցիալական հաստատությունների հետ,
- Թանգարանների փոխակերպումը՝ որպես «ապաքինման» և սոցիալական ներգրավման տարածքներ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ֆորումի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ և ելույթներ, որոնցում փորձագետներ Ֆատմա Մոստաֆան (Եգիպտոս) և Ի Եունմին (Կորեա) անդրադարձ կատարեցին թանգարանների դերին՝ որպես հուզական բարեկեցության և կրթական միջավայրերի։ Ժամբա Ջուսուբալիևան (Ղրղզստան) ներկայացրեց թանգարանային մշակույթը՝ բարեկեցության և ինքնագիտակցության ձևավորման համատեքստում։ Ֆոտեինի Վենիերին (Հունաստան) խոսեց թանգարանային թատրոնի մեթոդների մասին՝ բարդ լսարանների հետ աշխատանքի և հուզական լարվածության հաղթահարման համար։ Օլգա Սինիցինան և Դինարա Խալիկովան (Ռուսաստան) ներկայացրին ներառականության և հասանելիության ապահովման մոտեցումները, Քսենիա Բայկինան (Ռուսաստան)՝ արտ-թերապիայի գործիքները, իսկ Օլգա Լեոնովան (Ռուսաստան)՝ «դանդաղ դիտման» մեթոդը։ Քննարկումների ընթացքում ընդգծվեց թանգարանների սոցիալական դերակատարությունը և հոգեբանական աջակցության մեխանիզմների կիրառման կարևորությունը։

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ռուսական արվեստի թանգարանում նախատեսվում է զարգացնել և ընդլայնել տարեցների համար նախատեսված կրթական ծրագրերը՝ հիմք ընդունելով Սվետլանա Սարգսովայի հետ քննարկված փորձը։ Միաժամանակ նախատեսվում է ներդնել ներառական և արտ-թերապևտիկ նոր մեթոդներ՝ կիրառելով փորձագետներ Պոլինա Ժուրակովսկայայի, Եկատերինա Վերչենովայի և Անաստասիա Բելոլուցկայայի առաջարկած մոտեցումները։ Կարևորվում է նաև թանգարանային ծրագրերում ինտերակտիվ, շարժման և շփման վրա հիմնված գործիքների կիրառումը՝ փորձագետներ Լանա Օպալենիկի և Անդրեյ Պետրուշենկովի փորձի հիման վրա։

Որպես խոսնակ ստացել եմ ֆորումին մասնակցելու վկայական։

Ստորագրված փաստաթղթեր չեն արձանագրվել։

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հիմք ընդունելով Սվետլանա Սարգսովայի փորձը («Ֆորում դոնորների» ասոցիացիա)՝ առաջարկվում է Ռուսական արվեստի թանգարանում զարգացնել համագործակցությունը կոմերցիոն և դրամաշնորհային ոլորտների հետ՝ թանգարանի կրթական և սոցիալական ծրագրերի ֆինանսավորման բազմազանեցման նպատակով։ Նախատեսվում է մշակել գործընկերության նոր ձևաչափեր և դրամաշնորհային հայտեր 2026 թ. ընթացքում՝ Ռուսական արվեստի թանգարանի կրթական ծրագրերի բաժնի և զարգացման պատասխանատուների ներգրավմամբ։

Նաև նախատեսվում է համագործակցել Հրեաների թանգարանի կրթական բաժնի հետ՝ լավագույն փորձի փոխանակման և արդյունավետ կրթական մոդելների ներմուծման նպատակով: Ակնկալվում է ապահովել ծրագրերի կայուն ֆինանսավորում, ընդլայնել շահառուների շրջանակը և բարձրացնել թանգարանի սոցիալական ազդեցությունը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

20.04.2026թ.